

արարք մը անկարելի էր, երբ Չնքուշի մէջ կային մահմետական Պէշ (յետոյ միւտիւր), ոստիկանութիւն եւ զատարան: Ընդհակառակն, Եօղսուլը եղած է վեհանձն կտրիճ մը, քուրտերու բարեկամ, «փուխարիին պաշտպան», «ագգասէր», «ագգին ագատութեան երախտաւոր», «մեր (ագգի) վախի», «փուխարային օգտին համար ջանացող», «բոնաւորին դէմ հարբերդ (կուսակալանիստ) երթալով բողոքող» — ասոնք՝ 100ի մօտ ստորագրութիւն եւ կնիք (միւհիւր) կրող հանրազրութեան (Պոլսոյ հայոց Պատրիարքին զրկուած 1840ին) խօսքերն են:

Մեր պարզամիտ փոստիկանին արտառցողութիւններն ուղեցինք մամուլ մատնանելու եւ սրբազրելու, որովհետեւ ստուգեցինք, թէ բանասէրի համբաւ վայելող անձինք եւս զոհ դացած են անոնց եւ որպէս ճշմարտութիւն կամ «Ձմեռուշի պատմութիւն» ընդունած են անոր զրքոյկը:

Որպէս Չնքուշի, մենք նախ մեր ծընըդալայրի պատմութեան հետ կապ ունեցող վերոգրեալ սխալները կը յանձնենք բանասէրներու եւ պատմագիրներու ուշադրութեան, որպէսզի ասկէ ետք չը-

կրկնուին անոնք եւ կասեցուի անոնց յաւերժացումը պատմագրութեան մէջ, յետոյ համեստօրէն այլ պատմական ճշտութեամբ ցոյց տալու, թէ ինչպէս յառաջացած են եւ կը յառաջանան սխալները, որոնք շատ են հայ, եւ ինչո՞ւ չէ նաեւ օտար, պատմագրութեան մէջ:

Պատմագրութիւնը միայն այն ատեն կը ծառայէ իր նպատակին, երբ հիմնուած է իրական տուեալներու վրայ եւ օժտուած է քննադատական ուսումնասիրութեամբ, այլ խօսքով, երբ այն քննական պատմութիւն է:

Ահա թէ ինչո՞ւ համար մենք ծրագրած ենք եւ կը ջանանք Չնքուշի ՊԱՍՏՈՒՄը ընել Չնքուշին քննական պատմութիւնը, ուր կարելի եղածին չափ սեղմ գիծերու մէջ, եւ ամփոփ կերպով, ցոյց տրուին Չնքուշին եւ անոր արժէքներուն հանդէպ զանազան բանասէրներու եւ պատմագիրներու կատարած անիրաւութիւններն ու սխալներն ալ, եւ սրբազրուին անհրաքելի փաստերով ու իրողութիւններով, ապագային չկրկնուելու համար:

ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

Նահայր Պաղտատար Վրդ.ին յաջորդած է 1876-ին: Ան Եօղսուլ խաչոն կը յիշէ դատի մը տութիւն, որ ծագած է Եօղսուլին տղուն Օհանէսին Չօլախ Նիկոն ձեռնէն: Դատը տարուած է Մատեն, ուր դացած է նաեւ Մինաս Վրդ. ու վկայած Եօղսուլին ԳԵՄ, միանալով կաթողիկոսներուն: Մինաս Վրդ. կը պարծենայ (թէ եւ ատով կը հաստատէ Եօղսուլ խաչոյի ցարտասանութիւնն ու համարակալութիւնը), թէ ՄԸ. Խաչատուրը դատարանին մէջ ջախջախած է իր հակառակորդներուն փաստարկութիւնները եւ միայն իր վկայութեամբ է դատաւարտուած: Մինաս Վրդ. վանահայր չէր այդ թուականին, որովհետեւ կ'ըսէ թէ Պաղտատար Վրդ. հիւանդ էր: Եւ մենք գիտենք (1864 Օգոստ.ին Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքին իր զրած նամակէն), թէ Պաղտատար Վրդ.ի հիւանդութիւնը սկսած է 1862ին եւ տեւած մինչեւ իր մահը՝ 1876 — ծերութեան հիւանդութիւն: Սխալ չ'ըլլար, ուրեմն, ենթադրել, թէ Եօղսուլ խաչօ ապրած է մինչեւ 1870 թուականը: Յետոյ, երբ 1840ին, կամ անկէ առաջ,

ագգին վախի ընտրուած էր, կը նշանակէ, թէ այդ թուականին 50 տարեկան ըլլալու էր:

7. Յըսուլ փաստ մը այս մասին: Երեք տարի առաջ, երբ ձեռնարկեցինք Ձմեռուշապատմը խմբագրելու ծանր աշխատանքին, արտասահմանի հայ մատենագրաններու զուտը ափ առնելէ առաջ, օգտուեցանք Ամերիկայի մեր մի քանի թանկագին բարեկամներու զրադարաններէն: Անոնցմէ մին էր Ֆիլատելֆիարնակ գիտնական Փրոֆ. Մ. Սեւակ, որմէ խնդրեցինք նաեւ զրել արտասահմանի իրեն ծանօթ բանասէրներու եւ խնդրել անոնցմէ, որ ինձի՝ իմ պրպտումներու համար՝ աղբիւրներ ցոյց տան: Երեք ամիս ետք, մեր սիրելի փրոֆեսորը տեղեկացուց ինձ, թէ ծանօթ բանասէր մը (որուն անունը պիտի չտանք, բայց յօդուածները կ'ընեն ինչ յաճախ Հասկի եւ Երեմի ալ Հայաստանի Կոչնակի մէջ) զրած է իրեն, թէ «Ձմեռուշ միայն 250-300 տարուան պատմութիւն ունի»: Անտարակոյս փոստիկանի «պատմութիւն» է այդ, որ, դժբախտաբար հրապարակի վրայ եղած միակ զրքոյկն է Ձմեռուշի մասին:

ՆԿԱՐԻՉ

ԼԵՐՈՆ ԱԶՆԱԴՈՒՐԵԱՆ

(ԳԱՍԸՆԿԵՐ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ)

Քիչերու ծանօթ է նկարիչ Լեւոն Ազնաւուրեանի անունը: Իրապաշտ եւ տպաւորապաշտ դպրոցներու միջեւ տարուբերող տաղանդաւոր արուեստագէտ մըն է ան, որ արժանի է պատուաւոր տեղ մը զրաւելու Հայ Արուեստի Պանթէոնին մէջ:

Ծնած է 1889ին, Տրապիզոնի մօտ գետնուղ Ձեֆանոս հայաշատ գիւղին մէջ: Մանկութիւնը կ'անցընէ Աղեքսանդրիա: Երկրորդական ուսումները աւարտելէ ետք, ճարտարագետութիւն ուսանելու նպատակով՝ կը մեկնի Չուրիցերիա, ուր մտերիմ ընկեր կ'ըլլայ Ռուբէն Սեւակին, որմէ ունի զեղեցիկ յուշեր:

Լեւոն Ազնաւուրեան ճարտարագետութեան հանդէպ մասնաւոր բերում մը չըլլալով, կը ձգէ ուսումը եւ կը վերադառնայ Եգիպտոս, ուր ժամանակ մը կը զբաղի վաճառականութեամբ:


Եգիպտոսի մէջ անիկա կը ծանօթանայ արքունական պալատին խաւացի նկարիչ՝ Արթուրոյ Ծաննիերին, որ նկարչական տաղանդի նշոյլներ տեսնելով Ազնաւուրեանի առաջին ստեղծագործութիւններուն մէջ, կը քաջալերէ զինքը եւ կը յորդորէ որ նկարչութեան ասպարէզը նետուի: Ազնաւուրեան Եգիպտոսէն կ'անցնի Ռումանիա եւ Հունգարիա, ուր կ'ամուսնանայ: Իր աներոջ օժանդակութեամբ կը յաճախէ Հունգարիոյ արքայական Գեղարուեստի Բարձրագոյն վարժարանը, ուր նկարչութեան կանոնաւոր դասընթացքին հետեւելով, կ'աւարտէ



Նկարիչ ԼԵՒՈՆ ԱԶՆԱԴՈՒՐԵԱՆ

զայն՝ արժանանալով վկայականի եւ զընահատանքի: Երկրորդ համաշխարհային պատերազմէն ետք՝ 1949ին, կը թողու Հունգարիան եւ կը հաստատուի Իտալիա, Պուտափեշտի մէջ ձգելով երկար տարիներու իր վաստակը, անթիւ բնակարաններ, զիմանկարներ եւ իրանկարներ (nature morte):

Իտալիոյ մէջ, 1955ին, առաջին անգամ ըլլալով, երեսունէ աւելի նկարներ կը



Լ. ԱՋՆԱՌՈՒՐԵԱՆ
Portofino



Լ. ԱՋՆԱՌՈՒՐԵԱՆ
Capri, խորքին վրայ՝
հեղինակին աշխատանոցը
(նույն հեղինակին՝
Ս. Վազարի քանդաքանին)



Լ. ԱՋՆԱՌՈՒՐԵԱՆ – Հունգարական բնակար

ցուցադրէ, Միլանի Կուստոնի պատկերա-
որահին մէջ: Օրուան մամուլը գնահա-
տանքով կ'արտայայտուի հայազգի ար-
ուեստագէտի տաղանդի մասին:

«Il popolo di Milano» թերթը, քանի մը
տողերու մէջ, ճշգրտօրէն տուած է Լեւոն
Աղնաւուրեանի գործին բնորոշիչ գիծերը.
«Այս արուեստագէտին նկարչութիւնը, որ
երբեմն չափազանց նկարագրական է,
թրթռուն գոյներ ունի, եւ ողորդուած է
բանաստեղծական տաք շունչով մը»:

Իսկ «Corriere d'Informazione» թերթը
կը գրէ. «Լեւոն Աղնաւուրեան կը ցուցա-
դրէ բնանկարներ եւ իրանկարներ (na-
ture morte): Կարեւոր գործերէն են մաս-

նաւորապէս այն բնանկարները, որոնք
նկարուած են լայն եւ վստահ վրձինի
հարուածներով»: Նոյն թերթին մէջ կայ
նաեւ ուրիշ քննադատի մը սա տողերը.
«Նկարիչին արեւելեան նկարադիրը՝ իրեն
տուած է վառ գոյն մը, չողարձակ այլա-
դանութիւններ, որոնք երբ հակակշռուած
են, տուած են լաւ արդիւնքներ»:

Նկարիչ Լ. Աղնաւուրեանի ստեղծագոր-
ծութիւնները երկու որոշ մասերու վը
բաժնուին: Անոնցմէ մաս մը կը պատկանի
իրապաշտ, իսկ մաս մըն ալ նոր տպաւո-
րապաշտ դարոցին: Նկարիչը՝ իր վեր-
ջին շրջանի նկարներուն մէջն է որ ա-
ւելի կը հետեւի իրապաշտութեան, իր



Լ. ԱԶՆԱՎՈՐԵԱՆ – Szent Endre, Պուտափեշտի մօտ



Լ. ԱԶՆԱՎՈՐԵԱՆ – Իրանկար (nature morte)



Լ. ԱԶՆԱՎՈՐԵԱՆ – Հեղինակին կինը՝ Տիկ. Պարպարա

ազգակից Գրիգոր Շիրիթեանի ուղղութեան, որուն համաձայն՝ նկարչութեան նպատակն է «իրականութեան պատրանքը տալ» նկարին:

Սակայն, Ազնաւուրեանի տաղանդին իրական արժէքը պէտք է փնտռել իր տպաւորապաշտ նկարներուն մէջ:

Նոր – տպաւորապաշտներու առաջնորդներէն Paul Signac կը գրէ: «Նոր – տպաւորապաշտութիւն կը նշանակէ գոյներու պրիմաւակային տարրազգրութիւն: Գոյներու տարրազգրութեան նպատակն է, գոյնին տալ առաւելագոյն պայծառութիւնը, ... բնութեան լուսաւոր եւ գունազեղ պայծառութիւնը»: Նոր – տպաւորապաշտ նկարիչի մը համար ամէնէն կա-

րեւոր բանն է գոյնի ջինջ գեղեցկութիւնը եւ ներդաշնակութիւնը: Նկարը պէտք է ունենայ գոյներու բերեղային չօգրութիւն:

Լեւոն Ազնաւուրեան հաւատարիմ հետեւող մըն է նոր – տպաւորապաշտ դպրոցի սկզբունքներուն: Անոր երանգապնակը ճոխ է վառ գոյներով եւ իր լաւագոյն նրկարները թաթաւուն են արեւելքի առատ լոյսով եւ քնարերգութեամբ: Ազնաւուրեանի թափանցիկ եւ բազմազան երանգները, իր գունաւորելու նուրբ ճաշակը, պարզութիւնը, լոյսերու խաղերը կը գրաւեն մեզ: Հիանալի են մանաւանդ իր բնանկարները, որոնց մէջ կան կեանք, թրթռացում եւ զուարթութիւն: Վարպետ



Կ. ԱՋՆԱՒՈՒՐԵԱՆ - Իրանկար (nature morte)

նկարիչ մըն է անիկա անտարակոյս, եւ տիրացած է վրձինի գաղտնիքներուն:

Մարիոյ Լեփորէ՝ իտալացի գեղագէտ քննադատը կ'ըսէ թէ Աճնաւորեանի նրկարչութիւնը «անկեղծ արտայայտութիւնն է խղճամիտ արուեստագէտի մը, որ գիտէ իր արուեստը եւ ունի գնահատելի յատկութիւններ: Ան կը ջանայ իր ճամբայէն քալել առանց նորոյթներ դիտելու, առանց ինքզինքը քողարկելու. այլ կը վստահի գլխաւորապէս իր բնագոյնի եւ աշխատանքին, միշտ աւելի յառաջդիմելու համար»:

Յառաջագէտ երկիրներու մէջ, ամէն տարի՝ սունկերու նման, նորանոր նկարիչներ կը բուսնին: Տարուան գրեթէ բոլոր եղանակներուն՝ ցուցահանդէսի սը-

րահներու դուռերը միշտ բաց են: Վերացական, գերիրապաշտ արուեստի դիմա-կին ներքեւ, անտաղանդ միջակութիւններ հրապարակը կ'աղմկեն եւ շատ անգամ նոյնքան անտաղանդ քննադատներու քաջալերին եւ գնահատանքին կ'արժանանան: Անշուշտ, ժամանակը՝ անկաշառ եւ արգարակորով քննադատը, դաւկահար տերեւներու նման պիտի աւել տանի մեր օրերու արտագրութիւններուն մեծամասնութիւնը: Վստահ ենք սակայն, որ Լեւոն Աճնաւորեան, իբրեւ տաղանդաւոր նկարիչ, նուրբ ճաշակի տէր եւ ջինջ գոյներու վարպետ, հայ բնորեալ նկարիչներու աստղահայլին մէջ պիտի փայլի երկար:

Հ. Ե. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՄԵՌԱՆ ԸՆԿԵՐՈՋ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ամէնէն առաջ Գերմանիա գնաց
յետոյ աւելի մօտ Իտալիա
անկէ՝ աւելի մօտ Յունաստան
ու անկէ ետք
ս'ըր. ոչ ոք չիտէ:

Անիկա
ամէն անգամ որ ինձ հանդիպէր,
ճամբորդութիւններուն վրայ կը խօսէր
երբեմն ժամեր
երբեմն քանի մը վայրկեան՝
երբեմն ամիսներ.
բայց ինչ որ ալ ըլլար
շատ հետաքրքրական էր՝
շատ:

Անոր աչքերը
փայլ մը ունէին, որ իմիններս չունին.
եւ անիկա ինձ շատ բաներ կը պատմէր,
բայց ես չեմ կրնար
դանոնք հոս դրել:

Ուրիշ անգամ մը անիկա գնաց
Պարսկաստան, յետոյ Հնդկաստան
յետոյ Չինաստան.
երբ վերադարձաւ
շատ բաներ պատմեց ինձ.
եւ մտիկ կ'ընէր
ու ինքը կը խօսէր,
խօսած ատենը դիտէի թէ ինչ որ կ'ըսէր
ճիշտ էր.

արդէն անիկա երբեք
սուտ խօսած չէր:

Բայց եկաւ ատեն մը
ու ան չկարողացաւ ճամբորդել:
Պատճառները պարզ էին.
ընտանեկան խնդիրներ, դրամական խնդիրներ,
առողջական խնդիրներ, պարապ խնդիր-
ու ինձ ըսաւ թէ որ [ներ-
քիչ մ'ատեն ալ եթէ չկարենամ
ճամբորդել,
պիտի խենդենամ:
Ու անոր աչքերը փայլ մը ունէին.
ու իմ աչքերս չունէին այդ փայլը:

Ատեն մը վերջ տեսայ զինքը.
ուրախ էր.

ինձ ըսաւ թէ մօտ ատենէն
պիտի երթար
նախ Լիբիա, յետոյ Փափլակոնիա
յետոյ Քաննոնիա:
Նստայ քովը, երկար ատեն.
խօսեցայ շատ բաներ.
լաւ պիտի ըլլար թէ քովս
մնար,

բայց ան մեկնեցաւ.
կար դարձեալ աչքերուն մէջ փայլ մը
եւ ուրախ էր,
բայց ես վշտացած եմ իրեն հանդէպ
քանի որ չըսաւ թէ
ինչ ճամբով պիտի երթար:

ԱՌԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ